ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 29-ից 31-ը Էստոնիայի Հանրապետություն (մայրաքաղաք Տալլին) և 2023 թվականի հունիսի 1-ից 3-ը ներառյալ՝ Ֆինլանդիայի Հանրապետություն (մայրաքաղաք Հելսինկի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արևհատ Պողոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Էստոնիայի Հանրապետություն՝ մայրաքաղաք Տալլին, 2023թ. մայիսի 29-ից 31-ը

Ֆինլանդիայի Հարապետություն՝ մայրաքաղաք Հելսինկի, 2023թ.հունիսի 1-ից 3-ը

4. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ, Էստոնիայի Հանրապետության կառավարություն, Ֆինլանդիայի Հարապետության կառավարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Էստոնիային և Ֆինլանդիայի Հանրապետությունների ռազմավարական պլանավորման բնագավառում ճանաչողական-ուսուցողական այցին մասնակցություն

6. Քննարկված թեմաները.

Ճանաչողական-ուսուցողական այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ Էստոնիայի և Ֆինլանդիայի Հանրապետությունների ռազմավարական պլանավորման բնագավառում վերջիններիս փորձին:

1) Էստոնիայի Հանրապետություն

1.1 Էստոնիայի Հանրապետության կառավարություն ռազմական պլանավորման ստորաբաժանման ներկայացուցիչները ներկայացրել են.

- Էստոնիայի ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման համակարգը.

- «Էստոնիա 2035» ազգային երկարաժամկետ զարգացման ռազմավարությունը.
- Էստոնիայի ռազմավարական պլանավորման շրջանակ (այդ թվում նաև կատարողականի վրա հիմնված բյուջետավորման մասը).
- Բյուջեի ռազմավարության և կառավարության գործողությունների ծրագրի կապը.
- Կառավարության կատարողականի մոնիթորինգի համակարգը.
- Քաղաքացիական ծառայողների և քաղաքական գործիչների միջև համագործակցության շրջանակը.
- Ռազմավարության գործընթացներում սոցիալական տարբեր խմբերի ներգրավումը և մասնակցությունը Կառավարության կողմից իրականացվող գործընթացներին՝ հարցումներ և քննարկումներ կազմակերպելու միջոցով.

1.2 Էստոնիայի Հանրապետության ֆինանսների նախարարության ռազմավարական պլանավորման և բյուջետային ծրագրերի զարգացման ստորաբաժանման ղեկավարը ներկայացրել է.

- Կառավարության ծրագրի (ռազմավարության) և ֆինանսական կառավարման համակարգի համատեղման մեխանիզմները.
- կատարողականի վրա հիմնված բյուջետավորումը.
- բարեփոխումների նպատակներն ու հայեցակարգը .
- ռազմավարության և ֆինանսական կառավարման շրջանակ՝ տարբեր ռազմավարությունների և բյուջեի պլանավորման միջև համապատասխանության ապահովումը.
- Կատարողական բյուջետավորման բարեփոխումները և Էստոնիայի պետական բյուջետավորման գործընթացը և ինտեգրված հաշվետվությունների համակարգը.
- Բյուջեի ռազմավարությունը (1+3 տարի) և տարեկան բյուջետային գործընթացը.
- Ինտեգրված ֆինանսական կառավարման համակարգեր (IFMIS).

1.3 "E-Estonia" կազմակերպության կողմից ներկայացվել է Էստոնիայի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգը, որ ընդգրկում էր նաև ճանապարհային ցանցի էլեկտրոնային համակարգի՝ X-ROAD-ը, որը գլոբալ համակարգ է, որը ներառում է ամբողջ տրանսպորտային և ճանապարհային ենթակառուցվածքների համակարգը, և ինտեգրված է հարկային հարթակի, քաղաքացիների պետական ռեգիստրի, բանկերի, ՏԻՄ-ի, հեռահաղորդակցության տվյալների հետ և այլն:

2) Ֆինլանդիայի Հանրապետություն

2.1 Ֆինլանդիայի կառավարության ռազմավարական քաղաքականության մշակման ստորաբաժանման ներկայացուցիչների կողմից ներկայացվել են.

• Ռազմավարական պլանավորումը և համակարգի զարգացումը.

• Ռազմավարության հիերարխիան և ռազմավարության բացերին լուծում տալու մոտեցումները.

• Կառավարության ծրագրի մշտադիտարկման և հաշվետվության համակարգը

• Կանխատեսումների և իրավիճակի վերլուծությունը.

• Վերլուծության, գնահատման և հետազոտության Կառավարության պլանի իրականացումը (ապացույցների հիման վրա քաղաքականության մշակում)

2.2. Ֆինանսների նախարարության հանրային կառավարման ստորաբաժանման ներկայացուցիչների կողմից ներկայացվել են.

• Կառավարության ծրագիրը՝ որպես երկարաժամկետ պլանավորման և իրականացման գրավական՝ ռազմավարական քաղաքականության մշակումը որպես հիմնական մարտահրավեր

• Կատարողականի կառավարում և բյուջետավորում

• Բաց կառավարում, քաղաքացիական հասարակություն, վստահություն, նորարարություն

2.3 Սոցիալական հարցերի և առողջապահության նախարարության ռազմավարական պլանավորման ստորաբաժանման ներկայացուևցիչների նողմից ներկայացվել են հետևյալը.

• սոցիալական, կրթաթոշակային և առողջապահության ոլորտների ռազմավարական պլանավորումը և դրանց համապատասխանեցումը Կառավարության ծրագրի հետ.

• Կատարողական բյուջետավորում. նպատակների սահմանումը և հաշվետվությունների համակարգը

• Կառավարության ծրագիր՝ որպես ուղենիշ ոլորտային ռազմավարությունների և ֆինանսական պլանավորման համար

• Ռազմավարական պլանավորման բազան և ոլորտային ռազմավարության կանխատեսումները.

2.4. "Demos Helsinki" կազմակերպության գլխավոր խորհրդատուի կողմից ներկայացվել է «Հասարակության վերափոխման առաջատար մոտեցումներ և մեթոդները» թեմայով շնորհանդես, իրականացվել են քննարկումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Էստոնիայի և Ֆինլանդիայի Հանրապետությունների կառավորություններում, ֆինանսների նախարարություններում և Ֆինլանդիայի սոցիալական հարցերի և առողջապահության նախարարություններում հանդիպել ենք ռազմավարական պլանավորման և ծրագրային բյուջետավարման ստորաբաժանումների, էստոնական "E-Estonia" և ֆիննական "Demos Helsinki" կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում վերջիններիս կողմից ներկայացվել է իրենց երկրների ռազմավարական պլանավորման փորձը, հայաստանյան պատվիրակության կողմից ներկայացվել է ռազմավարական պլանավորման Հայաստանում իրականացվող ծրագրերը և միջոցառումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում որոշումներ, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Սակայն Էստոնիայի և Ֆինլանդիայի գործընկերները պատրաստակամություն են հայտնել ռազմավարական պլանավորման ոլորտի հետ առնչվող հարցերի դեպքում աջակցություն ցուցաբերելու հարցում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ճանաչողական-ուսուցողական այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում կարելի է եզրակացնել, որ ռազմավարական պլանավորման՝ մասնավորապես ռազմավարությունների պատշաճ իրականացման, մշտադիտարկման և ռիսկերի կառավարման նպատակով, առաջարկում եմ նախարարությունում ստեղծել առանձին ստորաբաժանում, որը կիրականացնի նախարարության մեջ ընդգրկված բոլոր ոլորտների ռազմավարությունների մշակման համակարգման և մշտադիտարկման գործառույթներ:

Նշված հարցը առաջարկում եմ քննարկել նախարարության ղեկավարության հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

07.06.2023